

ՏԻԿ. ԶԱՐՈՒՀԻ ԳԱԼԵՄԻՍԵԱՆԻ ՀԵՏ (ՈՒՐՈՒԱԳԻԾ)

Նոր չէ, որ կը ճանչնամ գինքը:

Մտաւորապէս քառորդ դարու թղթակցութիւն մը կը կամրջէ մեր բարեկամութիւնը՝ Ֆիլատելֆիայէն Նիւ Եորք:

Յետագային երբ բնակութիւնս Նիւ Եորք հաստատեցի, աւելի մօտէն պատեհութիւն ունեցայ վայելելու այս ազնուահոգի գրագիտութիւն գուրգուրոտ բարեկամութիւնը:

Ծանօթ գրագիտութիւն հետ մեր առաջին հանդիպումը տեղի ունեցաւ 1926-ի վերջերք, երբ անիկա Ֆիլատելֆիա հրաւիրուած էր դասախօսելու համար պոլսահայ գրական դէմքերու մասին:

Պայծառ տրամաբանութեամբ, խօսուն ու թափանցող աչքերով, նուրբ շարժումներով տիկնոջ մը դէմ յանդիման կը գտնուէի խօսելու ատեն Տիկ. Զարուհի Գալեմիսեանի հետ: Իր չափուած ձեւուած շարժումներուն բարեկրթութիւնը պոլսական վերնախաւին ֆրանսական մէկ հովը կու տար, առարկայ սակայն սովորական արուեստականութեան:

Իր արտայայտիչ ու բարի դէմքին վրայ բանաստեղծական զգայունութիւն մը ու փիլիսոփայական խոհականութիւն մը իրենց ուրուագիծերը դրոշմեր էին, կանխահաս՝ բայց իմացութեամբ հասունցած որոնք նոյն ատեն մայրական հովանաւորող, հասկցող ու քննող առողջանութիւն մը կու տային իրեն:

Տիրական և զմայլելի այս արտաքինը չէր սակայն ամէնէն ուշագրաւ յատկանիշը հանրածանօթ այս գրագիտութիւնը:

Բաւական էր համբերել մինչեւ որ ան սկսէր խօսիլ իր սիրած մէկ նիւթին շուրջ, առաւելապէս գրականութեան մասին, և ահա անիկա իր անսպասելի պաշարով, գեղեցիկ յիշատակներով, փորձառու ակնարկութիւններով, գրականութեան ու գրողներու մասին իր խորհման ու անախապաշար կարծիքներով կը հմայէր ունկընդիւրը:

Ինծի համար արտասովոր հաճոյք ու գոհութեամբ աղբիւր մը եղաւ լսել իր դասախօսութիւնը պոլսահայ կին գրական դէմքերու

մասին: Ինծի հետ հմայուեցան նաեւ սրահը լեցնող բոլոր ունկնդիրները, երբ ան իր գրական վերլուծումներու բովէն կ'անցընէր Սրբուհի Տիւսաբը, Անայիսը, Հայկանոյշ Մառքը, Ասատուրը, Զապէլ Եսայեանը և ուրիշներ, որոնք կին գրագիտութիւններու կողմէ ստեղծուած մեր արժէքաւոր գրականութեան փառքը կը կազմէին:

Տիկ. Գալեմիսեան մասնագիտական հմտութեամբ վերլուծեց ամէն մէկ հին գրողի տաղանդին այլազան կողմերը, նշելով իւրաքանչիւրին տեղը մեր գրականութեան մէջ:

Գասախօսութեան յատկանշական կողմը հոն էր, որ Տիկ. Գալեմիսեան Էրեւան բերաւ գրականութեան հանդէպ նուիրումի այնպիսի շեմբուանդութիւն մը, որ պաշտամունքի կը հասնէր: Անիկա նոյն ատեն կը ցուցադրէր խորունկ հմտութիւն մը ոչ միայն հայկական, այլ և ֆրանսական և միջազգային գրականութեան մասին:

Տիկ. Գալեմիսեան խորունկ տպաւորութիւն թողուց ֆիլատելֆիայեան վրայ:

Անիկա մէկ քանի օր հիւր եղաւ մեր քաղաքին և ինծի համար մեծ հաճոյք մը դարձաւ յարգելի գրագիտութիւն հետ պտտելի ամերիկեան պատմութեան մէջ նշանակելի մեր քաղաքին պատմական վայրերն ու թանգարանները:

Գեղեցիկը խորապէս սիրող ու գեղեցիկով յափշտակուիլ գիտցող արուեստագիտութիւն մըն է Տիկ. Գալեմիսեան:

Սահող տարիներուն հետ Ֆիլատելֆիոյ հայերը մէկէ աւելի անգամներ առիթը ունեցան ըմբռնելու Տիկ. Գալեմիսեանի ներկայութիւնը, և կրկին ու կրկին լսելու անոր ներշնչող, հիւթեղ ու խանդավառիչ ելոյթները գրական հարցերու շուրջ:

Մենք երկար տարիներով շարունակեցինք մեր նամակագրութիւնը:

Թերեւս օր մը ազնիւ գրագիտութիւն արտօնութեամբ հրատարակութեան տամ այդ նամակներու շարքը, որոնք նամակ ըլլալէ աւելի գրական գոհարներ են:

Տիկ. Գալեմիսեանի, իսկական գրագիտութիւն հարազատ հոգին է որ կը բացուի ծաղիկի մը պէս այդ նամակներուն մէջ:

Տաղանդաւոր գրագիտութիւն արուեստը ու սովորաբար իրենց այդ նամակներուն մէջ պիտի գտնեն նուրբ արուեստագիտութիւն մը հոգիին զգայուն թրթռացումները, անոր գեղապաշտ

յափշտակութիւնները, անոր նուիրումը արուեստի բազմաբնույթ, անոր հոգեղէն սլացքները դէպի վսեմին ոլորտները, անոր անշատութիւնները յուշերու քաղցրիկ յաճախանքին, անոր երազանքները քնքոյշ զգայնութիւններով լեցուն:

Վերջապէս այդ նամակներով աւելի եւս պիտի ճանչցուի ճամարիտ Զարուհի Գալեմիսեանը իր հասարակական դիմագծութիւնով, իր գրական վարպետութեամբ և իր անկեղծ հայրենասիրութեամբ:

Տիկին Գալեմիսեանը եւ աւելի մօտէն ճանչնալու պատեհութիւնն ունեցայ երբ 1932 թուականին խմբագրական պաշտօնով Նիւ Եորք փոխադրուեցայ և իրենց տունը յաճախակի այցելութիւններս գրական տաճարէ մը ներս մտնելու հոգեպարար վայելքը կու տային ինծի:

Հըտտըն գետի կանաչագեղ ափերէն քանի մը քայլ հեռու Գալեմիսեան տունը, ուր ծանօթ գրագիտութիւն կ'ապրէր իր շնորհալի դստեր և թոռնիկին հետ, արդէն տեսակ մը կեդրոն էր դարձած Նիւ Եորքի մտաւորական ընտանիքին, խաբկանքը յուզող պոլսոյ գրական աշուղներէ, ուր հայ գրականութեան աստղերէն շատեր իրենց տողանցքներն ու յափշտակութեան գողտրիկ արտագեղումներն ու մարգանքները կը կատարէին:

Առաջին րոպէին որ Գալեմիսեան տունէն ներս մտնէիր արդէն ինքզինքը կը զգայի բազմատաղանդ գրագիտութիւն իմացական հմայքին տակ, ջերմութեամբ ողողուած, յաճախ սրամիտ սլացքներով կենդանացած, միշտ պոլսական յուշերու անոյշ թրթռումներով զգայնացած և, սակայն, ամէն պարագայի տակ ալ հետաքրքրական:

Տիկ. Գալեմիսեան կրնար խօսիլ մշտահոս աղբիւրի մը պէս, առանց սակայն անոր միօրինակ կարկաչանիւն, միշտ փափկանկատօրէն պատեհութիւն տալով իր խօսակցին, միշտ համակրութեամբ և լայնամտութեամբ մտիկ ընելով տարբեր տեսակետներու:

Բայց հոգ չէ թէ ինչ նիւթի շուրջ խօսէր, ան գիտէր իր զմայլելի ու սահուն հայերէնով, իր ճոխ պատկերներով, իր զգայնիկ ու հաղորդական շունչով իր հոգիին համալրութեան բովանդակ թափովը մտերմութիւն մը ստեղծել իր և ունկնդրողին միջեւ:

Մանաւանդ երբ անիկա պրպտումը կ'ընէր

իր յուշերուն, այլեւս բանաստեղծական ներթափանց յուզումներու, հոգեբանական նրբանուրբ ապրումներու և նկարագրական հոյակապ ստեղծագործութիւններու առիթ մը կ'ըլլար:

Բայց պահ մը մենք ալ իրեն ընկերանանք «Գէպի մանկութեան տունս, դէպի մայրական գորովալիւր թեւերը, կուտական սենեակս միշտ Աստուածամօր պատկերովը, զոր Եղիա Տէմիրճիպաշեանը, հօրեղբորորդիս, նուիրած էր ինձ է ժամակեայ համրիչը գրասեղանիս վրայ, որուն հատիկները հաւաքած էր Մոտայի ծովակէն: Նորահաս աղջիկ, իսկոյն կը սահէր բաւական ցից զառիվարին, խառնուելու համար ծովափի խիճերուն և գտնելու անոնց մէջ ժամակներ, որոնցմէ համրիչ մըն ալ շինած էր Եղիային, երբ ան կը բնակէր Գառը Գիւղ»:

Կ'ուզէք աւելին գիտնալ հանճարեղ Եղիայի մասին: Կ'ուզէք աւելի լաւ ճանչնալ այդ մեծափառ և արտառոց իմացականութեան չքեղ գաղտնիքները: Ականջաւոր դարձէք, որ Տիկ. Գալեմիսեան ձեզի նկարագրէ Եղիան ու Եղիային վիշտը, որովհետեւ «ան նոր կորսնցուցած էր իր մայրը, Սըրմա Հանըմը, իսկապէս սրմայի պէս կին մը, կապոյտ աչքերով ու դեղին ոսկի մագերով, նուրբ ու ազնուական: Եղիան ամբողջ տարի մը թոյլ չտուաւ որ մարդ մտնէ այն սենեակը ուր մայրը մահացած էր և կը պահէր անոր անկողինը անաղարտ, բարձին մէջտեղ փոսիկ մը, մօրը զլխուն ծանրութեան հետքը և իրեն համար շինած ժամակեայ համրիչս, չեմ գիտեր ինչու և ինչպէս ներշնչումն ունեցեր էր Եղիան տանիլ կախելու մօրը լուսանկարին տակ: Մայրս չէր սիրած այդ գաղափարը և երբ հարցուց իր հօրեղբորորդույն թէ ինչ կը նշանակէր այդ, չպատասխանեց և տղու մը պէս սկսաւ հեծկլտալ»:

Տարիներ վերջ Տիկ. Գալեմիսեան երբ Պոլիս մեկնեցաւ Ամերիկա բերելու համար իր ամուսինը, որուն հետ այնպիսի ջերմիկ ու անքակտելի կապերով էր շաղախուած, մեծ կղզիէն 1934 Հոկտ. 26 թուակիր նամակով մը, «Սիրելի թոռնիկիս» ուղղուած, անիկա նոյն տրամանոյշ վերջնականութեամբ կ'այցելէ հայրենական տունը ու կ'ոգեկոչէ նոյն մտերմիկ մթնոլորտը, որոնց մէջ անցուցած է ան իր երիտասարդութեան չքնաղ օրերը:

Ահա թէ ինչ տրամաթախիծ պատկեր մը կը նկարէ զգայուն գրագիտութիւն երբ կը գրէ.

«Մեր տունը... անկէ կը գրեմ քեզի, Սէմէս, երէկ փոխադրուեցանք հոն պապիկիդ հետ. մեր տունը պարապ է... կը բարձրանամ մուտքի սանդուղներէն, մարդ չկայ տանը դրան առջեւ... սիրելի թեւեր չկան բացուելու համար դէպի ինձ: Սրտաբեկ կը մտնեմ ներս, սեղանատունը, ընդունելութեան սրահը, մառանները, խոհանոցը...: Գլխահակ կը դիտեմ շուրջս, ամէն բան իր տեղն է, մօրաքրոջ անկիւնը, բազկաթոռը, անոնք հինցեր են թէեւ, բայց տակաւին զիս ընդունելու վիճակի մէջ: Կը դիտեմ պատերը, ոսկեզօծ շրջանակներու մէջէն մեծ մօրս, հօրս, բոլոր իմ սիրելի հարազատներուս պատկերները. այս ամէնը անգրաշխարհային ցրտութեամբ մը կ'ողջագուրեն զիս»:

Տարիներ, տարիներ վերջ տակաւին Տիկ. Գալէմբիարեան պիտի շարունակէր կատարել յուշեր այս տրտում ձամբորդութեանը, դէպի անցեալ այս մեղամաղձիկ այցելութիւնը, երբ, վերստին Ֆիլատելֆիա փոխադրուելէ յետոյ իրեն կ'իմացնէի իր մասին այս գրական ուրուազիծը պատրաստելու մտադրութեանս մասին:

«Բայց ի՞նչ լաւ պիտի ըլլար, կը գրէր ան ինձի իր սիրուն ու գրական գոհարներով վըխտացող նամակի մը մէջ, ի՞նչ լաւ կ'ըլլար որ երկար օր մը տեսնէինք զիրար և ես քեզի պատմէի ընտանեկան պարագաներս, ներշնչումներու աղբիւրներս: Մեր ընտանիքին մէջ Եղիան իր երազուն ու յեղեղուկ նկարագրովը: Գուրգէնին ազդեցութիւնը գրական ու հօր ներշնչումներով, որոնց մէջ կամքը կը գործնայ, բայց կը կտրտէ թեւ ու թռիչք. ու Որբերեանը, Մալէգեանը, Կամսարականը, Զօհրապը, Վարուժանը, Պարսամեանը, Ահարոնեանը, Սիւսանը, Զ. Արսէն Կազիկեանը, Եղիշէ Գուրեանը. այս բոլորը, բոլորը հօրենական տունէս մինչեւ իմ կազմած բոյնս, ի՞նչ երազ, ի՞նչ վերացում հոգեկան, ապրումներու ի՞նչ սաւառնում»:

Սխալ պիտի ըլլար, սակայն, հետեցնել թէ Տիկ. Գալէմբիարեան միայն անցեալի յուշերով տարուած և անոնց զգայնութիւններով միայն շնչող մէկն է:

Այն Տիկ. Գալէմբիարեանը, որ ես տարիներով ճանչնալու պատահութիւնը ունեցայ ժամանակակից ամենայնաշաղկապ գաղափարներով օժտուած, ապստամբ, աննախապաշար և մարդկութիւնը յուզող բոլոր հարցերով ինքն ալ յուզուող ու բաբախող հոգի մըն է:

Շատ քիչ անձեր կը ճանչնամ, որոնք իրեն չափ գրքերու և թերթերու հետ կապուած են և օրը օրին կը չափեն մեր ժամանակներու բազկերակը, հիւանդի ախտաճանաչութեամբ մը, որ իրեն զանազանել կու տայ առողջը՝ հիւանդէն, իրաւը անիրաւէն, արդարը՝ անարդարէն:

Իր ծարաւի հոգիով անիկա կը լափլիզէ ոչ միայն հայերէն հրատարակուած բոլոր գրական և քաղաքական հանդէսներն ու թերթերը, այլեւ Ֆրանսական և անգլիական ուշագրաւ բոլոր երկերն ու հրատարակութիւնները իրենց տեղը կը գտնեն անոր գրասեղանին վրայ, Տիկ. Գալէմբիարեանը դարձնելով ամերիկահայ ամենամշակուած և զգայուն հայ գրագիտուհիներէն և մտաւորականներէն մին:

Տիկ. Գալէմբիարեանին աչքէն չեն վրիպիր Ամերիկայի և արտասահմանի մէջ հրատարակուած հարիւրաւոր գրական արտադրութիւնները, որոնց մասին յաճախ գրախօսականներով երեւան կու գայ ամերիկահայ մամուլին մէջ: Օժտուած է գրական ու գեղագիտական նուրբ հասկացողութեամբ ու չի վարանիր իր դիտողութիւններուն ու քննադատութիւններուն հետ իր անվերապահ համակրութեան կնիքը դնել վաւերական արժէքներուն վրայ: Մասնաւոր համակրութեամբ կը հետեւի մեր գրական անդամներին մէջ նոր տաղանդներու յայտնութեան և իր մայրական հոգածութեան առարկայ կը դարձնէ մասնաւորապէս երիտասարդ ուժերը:

Եւտերպէ ստորագրութեամբ սիրուն, քնքոյշ թափանցիկ ու ռոմանթիկ բանաստեղծութիւններ գրող պատանուհի Գալէմբիարեանի մէջ շատ բան փոփոխուած է անշուշտ և իր մասին այս անձնական ուրուագիծը պակաս պիտի փնար: Եթէ հոս չաւելցնէինք թէ ան երկար առեկէ ի վեր հրաժարած է թէեւ գունագեղ ու հմայիչ բայց հասարակական ոչ և է սեւեռակէտէ գուրմ մակերեսային ու վառվռուն բանաստեղծութիւններ գրելու տենչէն: Անիկա այսօր մեր մէջ յայտնի է իբրեւ հիւանդի գրագիտուհի, կազմուած նկարագիրով վարպետ արձակագիր ու նոյն առեկ փայլուն հրապարակագիր:

Անիկա ոչ միայն իր գրական աշխատակցութիւնը բերած է «Անահիտ»ին, «Կոչնակ»ին, «Պայքար բացառիկ»ին և բազմաթիւ ուրիշ գրական հանդէսներուն ու տարեգրքերուն, այլեւ հրապարակագրական յօդուածներով իր մասնակցութիւնը բերած է ընկերային, ազգային

կանոցի, կազմակերպական, բարեփոխական, եկեղեցական, հայրենասիրական բոլոր կարեւոր խնդիրներուն: Անիկա չի վարանիր իր ստորագրութեամբ ու խանդավառիչ բառերով հրապարակ գալու ոչ և է ազնիւ նպատակի համար՝ ըլլայ այդ Հայաստանի տարեգրքին նուիրուած թերթի մը բացառիկը, Առաջնորդարանի ձեռնարկ մը, գեղարուեստական ելոյթ մը — հոգ չէ թէ որքան յաճախ դիմած ըլլան իրեն, անիկա միշտ ալ իր անուան ու գրչին հմայքը փոխ տուած է ոչ և է հրատարակութեան մը կամ ձեռնարկի մը յաջողութիւնը ապահովելու համար, երբ անոնք եղած են իր սրտին ու հոգիին մօտ:

Տիկ. Գալէմբիարեանի գրական գործունէութեան մէկ պատկերը կը պարզէ մեր նկարագրականը: Այս գրեթէ առաջին գրչի աշխատանքներուն վրայ պէտք է աւելցնել դասախօսական ժողովները, ճաշկերոյթները, ազգային ու հանրային հաւաքոյթները, գեղարուեստական ձեռնարկները, համերգները և բազմաթիւ ուրիշ ձեռնարկներ, որոնց, առանց բացառութեան, տարիներով ան ներկայ եղած է, շատ յաճախ իբրեւ օրուան դասախօսը և պատուոյ հիւրը, և միշտ իր ներկայութեամբ խթան հանդիսանալու ու քաջալերելու համար ձեռնարկողներն ու արուեստագէտները:

Ազգին և հայրենիքին շահերով սերտօրէն կապուած և անկեղծ ու անվերապահ հայրենասիրութեամբ բաբախուն սիրտ մը ունի:

Տարիներ առաջ Ֆիլատելֆիա բնակութեանս ժամանակ, երբ գրական շատ հազուագիւտ հրատարակութիւններ կը ստացուէին, Հայաստան կը դրկէր «Գրական թերթ» և «Սովետական Արուեստ» ամսագրի օրինակները: Հայաստանի մէջ մշակուող մեր նոր գրականութեան հանդէպ իր սէրն ու գուրգուրանքը չափ ու սահման չունեցան: Գրեթէ առաջին անգամն էր, որ անիկա շփման կու գար ձեռով և բովանդակութեամբ բոլորովին տարբեր ու նոյն առեկ լիովին ազգային, կենդանի, խանդավառ գրականութեան հետ զոր մեր երկրի գրողները կը մշակէին և Տիկ. Գալէմբիարեան տալուորութիւններու և ուսումնասիրութիւններու շարք մը հրատարակեց «Պայքար» օրաթերթին մէջ, հայաստանեան գրական հրատարակութեանց ամէն մէկ նիւթի մասին:

Հակառակ անոր որ Տիկ. Գալէմբիարեան եւ

ղած է բարեկեցիկ ընտանիքի զաւակ ու երբեք չէ ճաշակած զրկանքի և թշուառութեան դառնութիւնները, այնուամենայնիւ անոր սիրտը միշտ ալ բաբախած է խոնարհներուն ու զրկեալներուն, որբերուն ու անկարներուն, իրաւագուրկներուն և բոլոր անիրաւեալներու հանդէպ, հոգ չէ թէ անոնք ինչ ցեղի ու գոյնի պատկանած ըլլան:

Ահա թէ ան ինչպիսի իրապաշտ և զգայուն բառերով կը նկարագրէ այդ զրկեալներէն մէկը, երբ կը գրէ.

«Ամբողջ ձմեռը հանդիպեցայ իրեն իմ երկար պտոյտներուս շրջանին: Չորցած ու խաթարուած դէմքով պառաւ մըն է մեր մայրիկը. բարձր հասակը կքած, սեւ վերարկու մը կարկտանեւորով լեցուն, կօշիկները այր մարդու հաստ կօշիկներ, կոշտ ու կոպիտ կտորներով ծակերը գոցուած, միշտ կռնակը բեռցած խոշոր պարկ մը, լեցուն դաշտի զանազան բոյսերով, որոնք ձմեռուան արեւին տակ կը ծլին և աղքատներու յատուկ ուտելիքներ են: Խրճիթի բնակիչներ, պզտիկ խանութպաններ գիտեն մամիկին պատմութիւնը և օգնելու համար անոր, աղքատի համար կը գնեն իր բոյսերէն: Ես ալ ձմեռը շատ անգամներ օգտուեցայ մամիկին խոտերէն, և ան պատմեց ինձի թէ երեք տարի առաջ մեռած էր զաւակը և յետոյ հարսը՝ երեք որբեր ձգելով իրեն: Այս տխուր դրուագը իր կեանքին, աւելի մօտեցուցած էր զիս մամիկին և կը զմայլէի այն կորովին ու քաջութեան՝ որով զինուած կը մագլցէր ձմեռը ցուրտին զանդիւրներէ, քաղելու համար ընտանի բոյսերը: Իրեն համար ոչ սեւ և ոչ տարիք գոյութիւն ունէր, այր մարդու մը ուժովը կ'աշխատէր ու կը կրէր իր բեռը»:

Համամարդկային շատ աւելի բարձր իտէալներու կը հասնի Տիկ. Գալէմբիարեան՝ երբ իր խօսքերը թողնիկին ուղղելով կ'ըսէ.

«... Եւ այսպիսի գեղեցիկ առիթը պիտի ներկայանայ ինձի, որ ես բացատրեմ քեզի, թէ ի՞նչ պէտք է ընես այս աշխարհի մէջ ապրելու, լոյսով ողողելու իմացականութիւնդ, քու կարգիդ լոյս սփռելու շուրջը և լուսաւոր ջահի մը պէս ազգիդ և ցեղիդ համար կատարելու առաջնորդողի դեր մը: ... Իմ երազս պսակած պիտի ըլլաս դուն վաղը՝ սիրելի թողնիկս, երբ քեզի ներշնչած զգացումներուս կնիքը հոգիիդ և մտքիդ վրայ, խորհուրդի և գաղափարի պայքարը մղես

դէպի տանջուած ընկերները քու ցեղիդ, որոնցմէ հարկւրաւոր երիտասարդներ, իրենց ազատ և մաքուր հայրենիքի դաշտերուն ու լեռներուն կեանքէն հեռացած, հոս կամ հոն, օտար գործարաններու մէջ, գեհեհեհեհեհ եռացող կուպրի կաթսաներուն առջեւ և ճոնջող մեքենաներուն ուժին ներքեւ, կը կորսնցնեն իրենց երիտասարդութիւնը, իրենց մաքի կորուլը, շատ անգամ դառնալով խեղանդամ ու այլեւս անօգտակար նոյնիսկ իրենց անձնական կեանքը վարելու»:

Գրագիտուհի Գալէմքիարեանի համար գրականութիւնը դատարկ ժամանակի և անձնական նեղիկ ու սահմանափակ զգայնութիւններու արտայայտութեան միջոց մը չէ: Այլ՝ կեանքը վերաշինելու, ազնուացնելու, բարձրացնելու, գեղեցկացնելու ու երջանկացնելու հիմնալի գործիք մը, որուն միջոցով գրողը իր ընթերցողը կը յուզէ, կը լարէ, արգահատանքի կամ առեւտրեան զգացումներով կը տոգորէ գայն, բարիի ու ճշմարտութեան համակրութեամբ կ'ողողէ անոր սիրտը:

Ահա զրազէտի այս կոչումով է, որ Տիկ. Գալէմքիարեան խորունկ համակրութեամբ թափաւուն և ըմբոստացնող հետեւեալ պատկերով կը նկարէ մեզի Նիւ Եորքը և Նիւ Եորքի անգործները:

Տեսէք թէ ինչ բանաստեղծական շունչով կը սկսի անիկա իր հակապատկերներու և հարցումներու կենդանի, յուզիչ և ընդգեցեցիչ շարքը:

«Արեւոտ օր, լոյս և տօնակատարութիւն բնութեան մէջ: Աղուոր առաւօտը անպարագրելի համբոյրի մը պէս լեցուել է մթնոլորտին մէջ: Խոռովիչ երջանկութիւն մը, որ միտքը յիշատակներով կը հարստացնէ:

«Պիւնիքս տանող ճամբուն երկարութիւնը ընդհատուած է, երկու տարիէ ի վեր: Ռոքֆորտ անագին հողամաս մը գնած և նուիրած է քաղաքապետութեան, հասարակաց պարտէզի մը վերածելու համար գայն: Մեքենաներու խլացուցիչ աղմուկ, պայթուցիկ, ժայռեր կը խորտակուին, գետիններ կը հարթուին, գործաւորներ կ'աշխատին հողին ու մուխին խառնուած:

«Կան սակայն անգործ գործաւորներու խումբեր որ կը թափառին այս աշխատութեանց շուրջ: Յանկարծական դէպք մը, հիւանդանոց մը, նոր մէկու մը պէտքը, հաւանական յոյսեր են այս խեղճերուն համար:

«Անարկ մը այս դժբախտներուն վրայ, բաւական է պատմութիւնը գիտնալու անոնց լայն և հանգիստ օրերուն... Չմեղը բարի եղաւ այս տարի ալ իրենց: Գոնէ դուրսը, զարնանային արեւին տակ, մաքուր թթուածինով մը կը կազդուրեն իրենց վհատած շիղերուն յոգնութիւնը: Կը դեգերին բնութեան ծոցին մէջ, անոր գիրկը, բայց ինչպէս ամոքել բողբոջ ստամոքսին դաւարկութիւնը... պահերը ծանր են... գաւակներ... ընտանիք...»:

Տիկ. Գալէմքիարեան չի բռնաբանար մականութիւնը մատնանիչ ընելով ու անտարբեր մէկ կողմ քաշուելով: Անիկա կը սիրէ երեւոյթներուն մէջ թափանցել ու հասնիլ իրողութիւններու աղբիւրին: Եւ ուրեմն, ան հարց կու տայ.

«Ո՞վ է անգործը, բնութիւնը... տարիներով մտեր են անոր արգանդին մէջ, իրենց քրտինքով ու արիւնով ոռոգել են անոր արգասաւորութիւնը, բայց ինչ կու տայ բնութիւնը այսօր փոխարէն. գեղեցիկ ու տաքուկ արեւ... յետո՞յ... ո՞վ է պատասխանատուն այդ դատարկ ստամոքսներուն... մղձաւանջ մը ատելութեան պէս անաւոր, մեքենաները...»:

«Մեքենան... որ երբեմն բարութեան պէս իջեր էր իրենց մէջ, խնայելու և ամոքելու տաժանագին յոգնութիւնները, այսօր հաւանական թշնամին դարձեր է գործաւորին. հանճարին արտադրութիւնը, գործութիւնը իշխեր է իրեն անհատական ուժին, ատելութեան մը պէս միտեր է իր հոգին մէջ:

Եւ այս բոլորէն յետոյ իմաստասիրօրէն հարց կու տար գրագիտուհին.

«Ի՞նչ պէտք է հարցնել դէպքը, ես բաց գրքի մը պէս կարգացել էի, ամէն օր, գործազուրկ գործաւորներու աչքերուն մէջ դաժանացած զգացումներու խորհուրդը...»:

Նոյն տեսնելու և նկատելու զմայլելի կարողութիւնը, նոյն փափուկ սէրը, նոյն առինքնող և պարզ ոճը կը գտնէք Գալէմքիարեանի բոլոր գրութիւններուն մէջ:

Իր խօսելու պարզ, առատահոս ու ճոխ և ազդեցիկ ձեւը կարծես թէ ազդած է նաեւ իր գրելու ոճին վրայ ալ, որ ունի հարազատութիւն ու քաղցրիկ շունչ մը, որ ընթերցողը իրեն կը կապէ առաջին րոպէն իսկ:

Ահա թէ ինչ կ'ըսէ գրագիտուհի բարեկամուհիս իր նամակներէն մէկուն մէջ, գրականութեան մասին, ծայր աստիճան հետաքրքրա-

կան տեսակէտներ յայտնելով, նոյն ատեն մէկ քանի գրողներու մասին.

«Գրականութիւնը կը նմանցնեմ ես իրական և կեղծ աղամանդներու, կը գրէ ծանօթ գրագիտուհին. երկուքն ալ կը կայծակեն լոյսին և ճառագայթներուն տակ. առաջինին շառայները յաւիտենական են, իսկ վերջինները ժամանակին հետ կ'եղծանին, կը խաւարին: Հէգ Տատրեանի գրական արտադրութիւնները չեն կրնար գոհացնել գեղեցիկ արտադրութեամբ սնանող միտքերը, բայց ժողովուրդը հետաքրքրութեամբ կը հետեւէր անոր վէպերուն և ոստիկանական պատմութեանց»:

Յետոյ անցնելով Օշականի մասին իր տեսակէտներուն, ան կ'աւելցնէ.

«Օշական հարկաւ թէ շատ կարգացած, դասականները ուսումնասիրած, ֆրանսերէնի հմուտ և բազմաբեղուն գրագէտ էր. սակայն ինչ օգուտ, եթէ իր մանուածապատ ոճը հասկնալու համար, ես անգամ, որ ամբողջ կեանքս անցուցել եմ գրքերու աշխատանքին մէջ, տարիներով ուսումնասիրել եմ գրաբարը և հետեւել եմ բոլոր դասականներուն, ունեցել եմ Գուրգէնին ու Տէմիրճիպաշեանին պէս ուսուցիչներ, ուշագիր և խոր ճիգերով կրնամ հասկնալ և երբեմն կուսեմ միայն անոր գրածներուն միտք բանին»:

Ահա գրականութեան այս ըմբռնումով է որ Տիկ. Գալէմքիարեան քառասնեակ մը տարիներէ ի վեր իր զմայլելի, բանաստեղծական արձակով և յատուկ ու մէկին հրապարակագրական արտայայտութիւններով, իր հայրենասիրական կոչերով պնծած ու հարստացուցած է մեր գրականութեան անդամները:

Դժբախտաբար ան մինչեւ հիմա մտահոգութիւնը ունեցած չէ իր գրական երկերը ի մի հաւաքելու հատորի մը կամ մէկէ աւելի հատորներու մէջ: Հաճոյքով կը լսեմ որ վերջերս ան կ'աշխատի ի մի հաւաքել աշխարհի ամէն կողմ հրատարակուող թերթերու և հանդէսներու մէջ իր ստորագրութիւնը կրող յօդուածները և գրական ստեղծագործութիւնները, որպէսզի իր գրական արգասիքը յանձնէ մեր մշակոյթի պատմութեան:

Տիկ. Գալէմքիարեան շատ աւելի թեթեւ ու երջանիկ սրտով պիտի կատարէր այդ գեղեցիկ և իրմէն ակնկալուած աշխատանքը, եթէ վերջերս դժբախտութիւնը չունենար կորսնցնելու իր սիրելի ամուսինը, որուն հետ խորունկ ու անքակտելի կապերով միաձուլուած էր, տիպար ամուսնութեան մը երջանիկ ու խաղաղ օրերը ապրելով:

Պր. Գալէմքիարեանի մահը հոգեւին ցնցեց զգայուն գրագիտուհին և այդ մեծ դժբախտութեան տակաւին ամիսներ վերջ ինծի կը գրէր հետեւեալ սրտառուէ տողերը.

«... կ'ուզէի նամակս շուտ և կանուխ գրել, սակայն այս օրերս ընկճուած էի նորէն ծանր սուգէս... Ունեցանք հոգեհանգիստ, գերեզմանի այցելութիւն: Երկու կանգուն հողի կտոր մը՝ ուր միայն ոչնչութիւնն անէացման գաղափարով կը տոգորէ միտքդ: Երեւակայել կեանքով, երջանկութեամբ գեղուն սիրելի մը որ կար ու չկայ... հակառակ որ երեւակայութեամբս շանացի հեռակայ, բարձրագոյն հորիզոններու թռիչք տալ, ոհ, անգթօրէն, ստրկօրէն հողին յարեցաւ, թափանցեց անկէ ներս, մուլ, խոնաւ, որդնոտած հողի ահաւոր զգայնութեան... մինչ տանս մէջ կը մնայ ինքը սիրելի, քաղցր յուշերով, անոյշ ժպիտով, զուարթ ու երիտասարդ իմացականութեամբ: Միշտ հետս իր հոգին, իր շունչը հետս է միշտ և կը խօսիմ, գուցէ նոյնիսկ պատասխան ալ կը ստանամ իրմէ»:

Ահա այս ընկճուած դրութեան մէջ գտայ Տիկ. Գալէմքիարեանը երբ անցեալ Մայիսին հաճոյքն ունեցայ Նիւ Եորքի մէջ իր տունը այցելելու:

Երբ ցուելը սպիանան և ժամանակին բուժիչ մատները հպին իր վիրաւոր սրտին, այն ատեն Տիկ. Գալէմքիարեան առաջուան խանդավառութեամբ և ինքնամատոյց սիրով պիտի նուիրուի իր պաշտած գրականութեան:

Իր հմայիչ անունն արդէն իսկ սկսած է վերստին յայտնուիլ գրական հրատարակի վրայ ու կը յուսանք որ անիկա գլուխ հանէ իր ամբողջական երկերը հրատարակելու ցանկալի երազը: